«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական իրավաբանական անձանց համար

Հայտ-հանձնարարականի ներկայացման ամսաթիվ և ժամ

ՆԵՐԴՐՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Իրավաբանական անձի անվանում

Գրանցման համար | *Գրանցման ամսաթիվ*

Գտնվելու վայր | *ՀՎՀՀ*

Ռեզիդենտություն

Բանկային հաշվի համար | *Բանկի անվանում*

Արժեթղթերի հաշվի համար | *Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անուն*

ԲԱԺՆԵՏՈՄՍԻ ՏՎՅԱԼՆԵՐ[1]

Ձեռք բերվող բաժնետոմսերի ԱՄՏԾ — *AMAMTLS11ER3*

Միավոր բաժնետոմսի ձեռքբերման գին — *206 ՀՀ դրամ*

Ձեռք բերվող բաժնետոմսերի քանակը և ընդհանուր գումարը

Քանակ (թվերով)

Ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումար (թվերով)

☐ Հանձնարարում եմ Բանկին բաժնետոմսերի ձեռքբերման դիմաց վճարվելիք գումարը ելքագրել իմ 15700_____ հաշվից: [2]

---

[1] Բաժնետոմսերի ձեռքբերման համար համապատասխան դրամական միջոցները ներդրողների կողմից պետք է մուտքագրվեն 1570043105289700 հաշվին մինչև հայտ-հանձնարարականի ներկայացման օրվա ավարտը:

[2] Եթե ներդրողի բանկային հաշիվը սպասարկվում է Ամերիաբանկ ՓԲԸ-ում, սույն հանձնարարականը հանդիսանում է միևնույն ժամանակ նաև վճարման հանձնարարական ներդրողի բանկային հաշվից ձեռքբերման գումարի փոխանցման համար:

ՀԱՅՏԱՐՈՒԹՅՈՒՆ
• Ծանոթացել եմ հայտ-հանձնարարականին, ինչպես նաև դրա ներկայացման և/կամ դրանցում նշված արժեթղթերի ձեռքբերման/տնօրինման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությանը, ներառյալ՝ Ազդագրին, Տեղեկատվական թերթիկին և հավաստիացնում եմ, որ համապատասխանում եմ դրանց պայմաններին, սահմանափակումներին և պահանջներին: • Ամբողջությամբ գիտակցում եմ և ստանձնում եմ բաժնետոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը: • Հավաստիացնում եմ, որ իմ կողմից Բանկին փոխանցվող ֆինանսական միջոցները ստացված են օրինական ճանապարհով և որևէ կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ: • Հաստատում և գիտակցում եմ, որ հայտ-հանձնարարականը հանդիսանում է բաժնետոմսերի ձեռքբերման (առքի) վերաբերյալ իմ և «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր:

Անուն, ազգանուն	Ստորագրություն	Ամսաթիվ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

ԾԱՆՈՒՑՈՒՄ: *Սույն Տեղեկատվական Թերթիկը հանդիսանում է հայտ-հանձնարարականի անբաժանելի մասը: Ներդրողները պարտավոր են ծանոթանալ և ստորագրել (կնքել համապատասխանաբար) Տեղակատվական Թերթիկը: Առանց ստորագրված և համապատասխան կերպով կնքված Տեղեկատվական Թերթիկի ներկայացված հայտ-հանձնարարականը համարվում է* ***անվավեր****: Տեղեկատվական Թերթիկում զետեղված տեղեկատվության վերաբերյալ առավել մանրամասն կարելի է ծանոթանալ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ (այսուհետ՝ Թողարկողի) բաժնետոմսերի Ազդագրում:*

1. Տեղեկատվություն Տեղաբաշխողի և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին

Թողարկողի կողմից բաժնետոմսերի տեղաբաշխումը կազմակերպելու է «Ամերիաբանկ» ՓԲ Ընկերությունը, որի հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2:

«Ամերիաբանկ» ՓԲ Ընկերության (այսուհետ տեքստում՝ Տեղաբաշխող) հետ կապի տվյալներն են՝

- Հեռախոս: (+37412) 51 31 06, (+37412) 51 31 07
- Էլեկտրոնային հասցե: CapitalMarkets@ameriabank.am

Ցանկացած անձ Տեղաբաշխողի հետ կարող է կապ հաստատել, ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն վերոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով, ցանկացած բանկային աշխատանքային օրվա ընթացքում Երևանի ժամանակով ժամը 09:30-ից մինչև 18:00-ը: Տեղաբաշխողի հետ հաղորդակցությունը կարելի է իրականացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Բաժնետոմսերի ձեռքբերման համար ներդրողները պետք է լրացնեն և Տեղաբաշխողին պատշաճ կերպով ներկայացնեն բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը:

Բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը կհամարվի պատշաճ կերպով ներկայացված Տեղաբաշխողին, եթե այն ներկայացվել է Տեղաբաշխողի հետ ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկի միջոցով.

Օնլայն եղանակով՝ • *Բանկի MyAmeria հավելվածի MyInvest հարթակի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով* • *Բանկի ինտերնետ բանկինգ համակարգով ներկայացնելու դեպքում*
Առձեռն՝ *այցելելով Բանկի որևէ մասնաճյուղ[3] և հաճախորդի մենեջերների միջոցով լրացնելով համապատասխան հայտ-հանձնարարականը*
Էլեկտրոնային փոստ՝ *CapitalMarkets@ameriabank.am*
CBAnet հասցե՝ *CapitalMarkets Ameriabank/AMERIA/CBANet@CBANet*

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի՝ Տեղաբաշխողը կարող է մատուցել ներդրումային ծառայություններ՝ առանց ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի: Տեղաբաշխողը լիցենզավորվել և գրանցվել է որպես բանկ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՀՀ Կենտրոնական բանկի հետ կապի տվյալներն են՝ ՀՀ ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 6, Հեռ՝ (374-10) 592 697, Ֆաքս՝ (374-10) 523 852, Էլ-փոստ՝ mcba@cba.am, S.W.I.F.T.CBRAAM22:

Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից

[3] Մասնաճյուղերի գործառնական օրերը և ժամերը ներկայացված են հետևյալ հղմամբ՝ https://ameriabank.am/service-network:

կամ Հաշվի Օպերատորից՝ Տեղաբաշխողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Հայտ-հանձնարարականները բավարարվում կամ մերժվում են այն ներկայացնելու օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում: Ներդրողը բավարարման կամ մերժման մասին տեղեկանում է այն կապի միջոցով, որով ներդրողը Բանկ է ներկայացրել բաժնետոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական/ները: Բացառություն է կազմում միայն Բանկի MyInvest հարթակի միջոցով տրամադրված էլեկտրոնային հայտերի դեպքը, երբ հայտերի բավարարման մասին տեղեկացումը տրամադրվում է Բանկի համակարգում գրանցված ներդրողի էլեկտրոնային հասցեին:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման, ինչպես նաև մերժման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա մասնակի բավարարումից կամ մերժումից հետո հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Տեղաբաշխողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ ներդրողների համապատասխան բանկային հաշվին փոխանցմամբ:

Տեղաբաշխողի կողմից «Շահերի բախման սահմանափակման քաղաքականության» համառոտ նկարագրությունը ներկայացվում է հաջորդիվ, սակայն ներդրողները կարող են Տեղաբաշխողի գործունեության հասցեում ծանոթանալ քաղաքականության ամբողջական տարբերակի հետ: Քաղաքականության նպատակը ներդրումային ծառայություններ մատուցելիս հնարավոր շահերի բախումների սահմանումն է և դրանց կանխարգելման ուղղությամբ տեղաբաշխողի կողմից իրականացվող միջոցառումների նկարագրությունը:

Արժեթղթերի շուկայում գործարքներ իրականացնելիս Տեղաբաշխողը և իր աշխատակիցները պարտավոր են իրենց հարաբերությունները հաճախորդների հետ կառուցել հետևյալ սկզբունքների վրա՝ ազնվություն, բարեխղճություն, տեղեկատվության ամբողջական բացահայտում, հաճախորդների հանձնարարականների կատարում՝ խիստ պահպանելով հաճախորդի շահերի առաջնայնությունը, մասնավորապես, հաճախորդների հանձնարակականների առաջնային կատարումը:

Տեղաբաշխողը հաճախորդի միջոցներով գործարքներ իրականացնելիս պարտավոր է պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, իր ներքին կանոնները, ինչպես նաև աշխատանքային և մասնագիտական գործունեության էթիկայի կանոնները, մասնավորապես՝ խուսափել իր գործառույթների իրականացման ընթացքում կամ դրանց հետ կապված հօգուտ իրեն այնպիսի գործողություններ իրականացնելուց, գործարքներ կնքելուց, որոնց արդյունքում կտուժեն հաճախորդների շահերը:

2. Տեղեկատվություն բաժնետոմսերի և դրանց հետ առնչվող ռիսկերի մասին

Մասնավոր ընկերությունների (կորպորատիվ) բաժնետոմսերում ներդրումները սովորաբար կապված են որոշակի ռիսկերի հետ: Այդ ռիսկերի հնարավորինս բացահայտումը, վերլուծությունը, ի հայտ գալու հավանականության և ներդրողի ֆինանսական վիճակի վրա ազդեցության չափի գնահատումը թույլ կտա ներդրողին կատարել արդյունավետ ներդրումային որոշումներ՝ հիմնվելով յուրաքանչյուր ներդրողի համար յուրահատուկ ներդրման ռիսկ-եկամտաբերություն համակցության վրա:

Հետևաբար, ցանկացած պարագայում, ներդրողներին խորհուրդ է տրվում մինչև ներդրումային որոշում կայացնելը հանգամանորեն վերլուծել Թողարկողի բաժնետոմսերի ներդրման հետ կապված ռիսկերը, ի լրումն Ազդագրում ներկայացված տեղեկատվության: Թողարկողի բաժնետոմսերում ներդրումների հետ կապված որպես էական ռիսկեր դիտարկվում են հետևյալ ռիսկերը, որոնք բաժանվում են երկու մեծ խմբի՝ Թողարկողի գործունեության հետ կապված ռիսկեր և Թողարկողի բաժնետոմսերում ներդրումների հետ կապված ռիսկեր:

2.1. Թողարկողի գործունեության հետ կապված ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագիրը ներակայացված է Ազդագրի 3.2 մասում:

Մրցակցային ռիսկ: Թողարկողի գործունեության՝ հեռահաղորդակցության շուկայում առկա է մրցակցություն և ժամանակ առ ժամանակ հնարավոր է դրա սրացում, ինչը կարող է բացասաբար ազդեցություն Ընկերության գործառնական և/կամ ֆինանսական ցուցանիշների վրա:

Կապիտալ ծախսերի և շրջանառու կապիտալի հետ կապված ծախսեր: Ընկերության գործունեության ոլորտն իր տեսակով ծախսատար է, և իր մրցակցային դիրքը պահպանելու և/կամ առավել բարելավելու համար Ընկերությունը իրականացնում է մեծ ծավալի կապիտալ և շրջանառու կապիտալի ներդրումներ:

Տնտեսական, քաղաքական, և սոցիալական ռիսկեր: Ընկերության, ինչպես նաև մրցակիցների և առհասարակ ոլորտի հաջողությունը սերտորեն կապված է ՀՀ-ում ընդհանուր տնտեսական զարգացումների հետ: ՀՀ

տնտեսական վիճակի վատթարացումը կարող է բացասական ազդեցություն ունենալ հաճախորդների վճարունակության և սպառման օրինաչափությունների վրա:

Արտարժութային ռիսկ: Ընկերության կապիտալ ներդրումների մեծ մասը, ինչպես նաև որոշակի տեսակի ծառայությունների (ռոումինգ, միջազգային զանգեր, միջազգային կապուղիներ և այլն) և մեծածախ ինտերնետի առուվաճառքն իրականացվում է արտարժույթով, ուստի Թողարկողի մոտ առկա է նաև արտարժութային ռիսկի գործոնը՝ կապված փոխարժեքի հնարավոր տատանումների հետ:

Պահանջարկի նվազման ռիսկ: ՀՀ-ում հեռահաղորդակցության ծառայությունների նկատմամբ պահանջարկը էական ազդեցություն ունի Թողարկողի և մրցակիցների գործունեության վրա:

Հաճախորդների արտահոսքի ռիսկ: Շարժական և ամրակցված կապի ոլորտներին հատուկ է բաժանորդների արտահոսքը, որը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է մրցակցության բարձր մակարդակով:

Դատական գործընթացներ: Ընկերությունը ներգրավված է մի քանի դատական վարույթներում (ներկայացված է Ազդագրի 3.17.3 կետով), և վերջիններիս մասով Ընկերության համար անբարենպաստ դատական ակտերի կայացումը և ուժի մեջ մտնելը կարող են էական բացասական ազդեցություն ունենալ Թողարկողի ֆինանսական ցուցանիշների և գործունեության վրա:

2.2. Թողարկողի բաժնետոմսերում ներդրումների հետ կապված ռիսկեր

Թողարկողին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագիրը ներակայացված է Ազդագրի 2.1 մասում:

Տոկոսադրույքի ռիսկ: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի Բաժնետոմսերից ակնկալվող եկամտաբերության ցուցանիշի վերանայման:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Բաժնետոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են (կարճաժամկետ կամ երկարաժամկետ ժամանակամիջոցում) նվազել ներքին և միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Բաժնետոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, պարտավորությունների կատարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Ցուցակման հետ կապված ռիսկեր: Թողարկողը Բաժնետոմսերը ցուցակելու և/կամ առևտրին թույլատրելու նպատակով դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ Բորսա): Բաժնետոմսերի՝ առևտրի թույլտվություն չստանալու դեպքում տեղաբաշխումը կհամարվի չեղյալ, որից հետո Ընկերությունը ետ կգնի տեղաբաշխված բաժնետոմսերը:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը երկրորդային շուկայում Բաժնետոմսերի իրացվելիությունն ապահովելու համար ներգրավելու է շուկա ստեղծող(ներ): Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ Բաժնետոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել Բաժնետոմսերը երկրորդային շուկայում իրենց համար տնտեսապես շահավետ գնով և ծավալով:

Բաժնետերերին տրվող ձայնի իրավունքների դասային տարբերություն: Ազդագրի ներքո առաջարկվող «Ա» դասի բաժնետոմսերի սեփականատերերն ունեն ավելի ցածր ձայնի իրավունք, քան «Բ» դասի բաժնետոմսերի սեփականատերերը: Բաժնետոմսերի առաջարկից հետո Ընկերության «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատեր «Թիմ» ՓԲԸ-ն կպահպանի հիմնական բաժնեմասը և կշարունակի էական ազդեցություն ունենալ Ընկերության վրա:

Բաժնետոմսերից բխող իրավունքների իրացում: Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ Բաժնետոմսերից բխող իրավունքները հնարավոր կլինի իրացնել միայն Թողարկողի կանոնադրական կապիտալի փոփոխությունն արտացոլող կանոնադրությունը իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից գրանցելուց հետո:

Շահութաբաժնի վճարման սահմանափակումներ: Ընկերության կողմից շահութաբաժինների վճարումը կախված կլինի մի շարք գործոններից, ինչպիսիք են օրինակ զուտ (նաև կուտակված) շահույթի մակարդակը, եկամուտների և շահութաբերության մակարդակը, պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցությունը, գործող օրենքներով և վարկային պայմանագրերով շահութաբաժինների վճարման վերաբերյալ կիրառելի սահմանափակումները և այլ գործոններ: Եթե ապագայում շահութաբաժիններ չվճարվեն, ապա Բաժնետոմսերի գնով պայմանավորված կապիտալի հավելաճը (եթե այդպիսին լինի) ներդրողների շահույթի միակ աղբյուրը կհանդիսանա:

2.3.Տեղեկատվություն հրապարակված ազդագրի մասին

Ցանկացած անձ կարող է Թողարկողի կողմից առաջարկվող բաժնետոմսերի Ազդագիրը ստանալ «Ամերիաբանկ» ՓԲ Ընկերության գործունեության վայրում (հասցե՝ ՀՀ, 0010 Երևան, Վ. Սարգսյան 2), իսկ էլեկտրոնային տարբերակը՝ «Ամերիաբանկ» ՓԲ Ընկերության ինտերնետային կայքից (www.ameriabank.am) կամ Թողարկողի ինտերնետային կայքից (www.telecomarmenia.am):

2.4.Տեղեկատվություն երաշխավորության և երաշխավորի մասին

Թողարկողի բաժնետոմսերն ապահովված կամ երաշխավորված չեն:

3. Գործարքի կնքման վայրը

Գործարքի կնքման վայր է համարվում Տեղաբաշխողի գործունեության իրավաբանական հասցեն:

4. Տեղեկատվություն ծախսերի և միջնորդավճարների մասին

4.1. Բաժնետոմսերի դիմաց վճարումը

Ներդրողները բաժնետոմսի դիմաց կատարում են վճարումներ համաձայն բաժնետոմսերի Ազդագրի:

4.2.Ընդհանուր տեղեկություններ ծախսերի և միջնորդավճարների մասին

Տեղաբաշխման ընթացքում ներդրողները կարող են ունենալ հետևյալ ծախսերը՝

- որևէ առևտրային բանկում բանկային հաշվի բացման հետ կապված ծախսեր՝ համաձայն յուրաքանչյուր առևտրային բանկի գործող սակագների,
- «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ կամ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված պահառուների մոտ արժեթղթերի հաշվի բացման, վարման և արժեթղթերի պահպանման հետ կապված ծախսեր՝ համաձայն յուրաքանչյուր պահառուի գործող սակագների,
- Հայտ-հանձնարարականի բավարարման արդյունքում թողարկված արժեթղթերի ձեռքբերման և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ամրագրման հետ կապված ծախսեր: Մասնավորապես՝
    - ձեռքբերվող բաժնետոմսերի համար Թողարկողի բանկային հաշվին ներդրողի (ձեռք բերողի) բանկային հաշվից համապատասխան գումարի փոխանցման հետ կապված բանկային ծախսեր՝ համաձայն սպասարկող առևտրային բանկի գործող սակագների,
    - ձեռքբերվող բաժնետոմսերի համար արժեթղթերի փոխանցման հետ կապված պահառուի ծախսեր՝ համաձայն սպասարկող պահառուի գործող սակագների:

Ներդրողները հնարավոր շահութաբաժինների ստացման, բաժնետոմսերի շրջանառության ընթացքում բաժնետոմսերով առքուվաճառի գործարքների իրականացման արդյունքում կարող են ունենալ նաև հարկային ծախսեր՝ համաձայն իրենց՝ որպես հարկ վճարողի կարգավիճակի (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ, գործող հարկային արտոնությունների առկայություն և այլն): Հետևաբար հնարավոր է, որ Թողարկողը, հանդես գալով որպես հարկային գործակալ, իրականացնի օրենսդրությամբ նախատեսված որոշակի հարկային պահումներ: Բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկման առավել մանրամասն նկարագրությունը ներկայացված է բաժնետոմսերի Ազդագրում:

4.3. «Ամերիաբանկ» ՓԲ Ընկերության կողմից առաջարկվող ծառայությունները

Տեղաբախման ընթացքում բաժնետոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գործողությունների հետ կապված «Ամերիաբանկ» ՓԲ Ընկերության կողմից առաջարկվող ծառայությունները ներկայացվում են ստորև՝

- բանկային հաշվի բացում՝ համաձայն «Ամերիաբանկ» ՓԲ Ընկերության գործող սակագների,
- բանկային հաշվին բաժնետոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ կանխիկ միջոցների մուտքագրում՝ համաձայն «Ամերիաբանկ» ՓԲ Ընկերության գործող սակագների,
- արժեթղթերի հաշվի բացում և վարում՝ համաձայն «Ամերիաբանկ» ՓԲ Ընկերության գործող սակագների:

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն

(ստորագրող անձի անուն, ազգանունը)